Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՐԻԶ

Հունիսի 13-ի առավոտյան Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը ժամանեց Փարիզ: Փարիզի օդանավակայանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեչյանը, Արևմտյան Եվրոպայում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի նվիրակ Գյուտ արքեպս. Նագգաշյանը, հայ համայնքի ներկայացուցիչներ:

Հաջորդ առավոտյան Փարիզի Մայր եկեղեցու Ֆրենկյան Սրահում Գարեգին Ա Կաթողիկոսի նախագահությամբ բացվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի տոնակատարության նախապատրաստական աշխատանքներին նվիրված խորհրդակցական գիտաժողովը, որը հրավիրվել էր 1700-ամյակի հանձնախմբի Գործադիր մարմնի կողմից:

Խորհրդաժողովը բացեց Գյուտ արքեպս. Նագգաշյանը: Ողջույնի խոսքով հանդես եկան հանձնախմբի ատենապետներ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը և Մեսրոպ արք. Աշճյանը:

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Սպա ներկաներին իր հայրապետական պատգամը տվեց Գարեգին Ա Կաթողիկոսը: Իր ներածական խոսքում Վեհափառ Հայրապետը հանգամանորեն անդրադարձավ Հայոց Դարձին՝ պատմական դիտանկյունից, և նշեց, որ գիտաժողով հրավիրելը հետապնդում է մի գլխավոր նպատակ, այն է՝ ծանոթանալու հայագետների, հայ թե օտար, մտածումներին և ծրագրերին՝ Հայ Եկեղեցու պաշտոնական հիմնադրության 1700-ամյակը միջազգային տարողությամբ նշելու համար:

Խորհրդաժողովի ընթացքում ընթերցվեց նրա մասնակիցներին ուղղված Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսի ողջույնի ուղերձը: Ողջույնի խոսք ասաց. Կ. Պոլսո պատրիարք Գարեգին արքեպս. Գալանճյանը:

Երկու օրերի ընթացքում գիտաժողովի մասնակից շուրջ 40 հայագետներ, որոնք եկել էին Ֆրանսիայից, Միացյալ Նահանգներից, Անգլիայից, Իտալիայից, Գերմանիայից, Բելգիայից, Ավստրիայից և Միջին Արևելքից, իրենց ելույթներում ներկայացրեցին ամենատարբեր ծրագրեր և առաջարկներ՝ մշակութային միջոցառումների կազմակերպում, գիտաժողովների անցկացում, հրատարակությունների, ուխտագնացությունների կազմակերպում, պատմական հուշարձանների վերանորոգում և բազմապան այլ առաջարկներ՝ կապված 1700-ամյակի տոնակատարության հետ:

Խորհրդակցական գիտաժողովի կազմակերպիչները զեկուցումները խմբավորել էին ըստ հետևյալ հինգ գլխավոր թեմաների՝

1. «Քրիստոնեության 2000-ամյակ և 1700-ամյակ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակելու»: Այս բաժնի ղեկավարներն էին պրոֆ. Բեռնար Ռիթեն և Դենիս Փափազյանը:

2. «1700-ամյակը որպես միջազգային երևույթ. ցուցահանդեսներ, գիտաժողովներ և այլ ծրագրեր»: Նյութի քննարկման ղեկավարներն էին դոկտ. Պատրիկ Տոնապետյանը և պրոֆ. Ժան-Պիեռ Մահեն:

3. «Գիտական հրատարակություններ նվիրված 1700-ամյակին»: Նյութի քննարկման ղեկավարներն էին պրոֆ. Ռոբերտ Թոմսոնը և Նինա Գարսոյանը:

4. «Ուխտագնացություններ»: Նյութի քննարկման ղեկավարներն էին Գեղամ Քևոնյանը և Հովնան արքեպս. Տերտերյանը:

Կենտրոնական վարչությունը գիտաժողովի սկզբում շեշտեց, որ խորհրդակցության նպատակն է կարծիքների և մտքերի փոխանակման հնարավորություն ստեղծել: Գիտաժողովի առաջին օրը ներկայացվեցին մի շարք ծրագրեր և առաջարկներ, որոնց իրենց գործուն մասնակցությունը բերեցին Նորին Սրբությունը և ներկա հոգևորականությունը:

Գիտաժողովի ընթացքը առավել արդյունավետ դարձնելու համար կենտրոնական վարչության կազմ ատենապետերը ստեղծեցին հինգ ենթահանձնախմբեր, որոնց հանձնարարվեց գործունեության մի-մի ծրագիր ներկայացնել:

Առաջին խմբի քննարկման նյութն էր «1700-ամյակի հոգևոր բնույթը» թեման, ղեկավարներ պրոֆեսորներ Վիգեն Կյուրոյան և Մանֆրեդ Ռիխտեր: Երկրորդ խումբ՝ «Համաժողովներ և խորհրդաժողովներ», ղեկավար՝ պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյան: Երրորդ խումբ՝ «Միջազգային ցուցահանդեսներ», ղեկավարներ՝ դոկտ. Պատրիկ Տոնապետյան և պրոֆ. Տիգրան Գույումճյան: Չորրորդ խումբ՝ «Հրատարակություններ», ղեկավարներ՝ պրոֆ. Ռոբերտ Թոմսոն և Նինա Գարսոյան: Հինգերորդ խումբ՝ «Ուխտագնացություններ», ղեկավարներ՝ Հովնան արքեպս. Տերտերյան և Գեղամ Քևոնյան:

Ենթահանձնախմբերի ղեկավարները, որոնք ներկայացրեցին իրենց մանրամասն տեղեկատվությունները, ոչ միայն անդրադարձան խորհրդակցական գիտաժողովին, այլև ներկայացրեցին հստակ ուղեգիծ առաջիկայում կատարվելիք աշխատանքների կամ ծրագրերի առնչությամբ: Ներկայացված տեղեկատվությունները պետք է հրապարակվեն այդ նպատակի համար նախատեսված պաշտոնաթերթում: Ստորև ներկայացնում ենք միայն ամփոփումը առաջիկայում հրապարակվելիք նյութերի.

Տեղեկատվության ամփոփումներ

Առաջին խումբ. «Հոգևոր բնույթ 1700-ամյակի», տեղեկագրող՝ պրոֆ. Վիգեն Կյուրոյան:

ա/ Անհրաժեշտ է պատրաստել աստվածաբանության քննական-վերլուծական մի տեքստ, որի ուսումնասիրության նյութը պետք է լինի բարքերի /էթոս/, ապգայնականության և հավատքի հարցերի փոխհարաբերությունը:

բ/ Անհրաժեշտությունը սահմանելու արդի իրականության մեջ հայ քրիստոնեական ինքնությունը, ինչպես նաև Եկեղեցու կյանքին մեջ առնչվող հիմնական մտածելակերպը:

գ/ Վերոհիշյալ առաջին և երկրորդ կետերի լույսի ներքո Հայ Եկեղեցին պետք է ընթանա համաքայլ և համերաշխ ներկա էկյումենիկ շարժմանը և իր որոշակի մասնակցությունը բերի քրիստոնեական էկյումենիկ աշխատանքներին:

դ/ Անհրաժեշտությունը հովվական ձեռնարկումների, որոնց պարտականությունը պետք է լինի համապատասխանեցնել կամ ներդաշնակել մշակույթի դրսևորումները հավատքի կյանքի հետ բոլոր այն վայրերի մեջ, ուր Հայ Եկեղեցին կա և գործում է:

ե/ Անհրաժեշտ է իրականացնել Հավատո Հանգանակը բացատրող գրքույկների տպագրությունը, հատկապես երիտասարդների համար, ինչպես նաև երեխաների համար նախատեսված Աստվածաշնչի

հրատարակությունը՝ նկարապարդված հայ մանրանկարչության վերարտադրություններով:

Երկրորդ խումբ. «Տեղական և միջազգային համագումարներ», Ներկայացրեց Ռիչարդ Հովհաննիսյանը:

Հանձնախումբը առաջարկում է, որ երկու կամ երեքօրյա միջազգային մի մեծ համագումար տեղի ունենա, ուր մասնակցեն այնպիսի մասնագետներ և գիտնականներ, որոնց ուսումնասիրությունների նյութը լինի Հայ Եկեղեցու պատմությունն ու աստվածաբանությունը, Հայ Եկեղեցու ավանդը հայ գրականության, ճարտարապետության, նկարչության մեջ և նրա խաղացած դերը հայ ժողովրդի կյանքում պետականությունը կորցրած շրջանում: Անհրաժեշտ է նաև քննել ցեղասպանության հասցրած հարվածները Հայ Եկեղեցուն, Եկեղեցու դերը հայ ժողովրդի վերապրումի և վերակենդանացման մեջ և այն մարտահրավերները, որոնց այսօր դիմագրավում է Հայ Եկեղեցին: Հանձնախումբը նպատակահարմար է գտնում, որ ավելի սեղմ շրջանային համագումարներ տեղի ունենա մասնահատուկ նյութերի շուրջ: Բոլոր համագումարները պետք է կազմակերպվեն այնպես, որ ընդգրկեն օտար, ինչպես նաև հայ գիտնականների և շեշտեն 1700-ամյակի ոգեկոչումների էկյումենիկ նկարագիրը:

Երրորդ խումբ. «Միջազգային ցուցահանդեսներ», ներկայացվեցին պրոֆ. Տիգրան Գույումճյանի և դոկտ. Պատրիկ Տոնապետյանի կողմից:

Հանձնախումբը առաջարկում է կազմակերպել շրջանային և միջազգային ցուցահանդեսներ՝ շեշտելու համար քրիստոնյա ազգային առաջին Եկեղեցու, առաջնորդողի նկարագիրը, որը ծնունդ տվեց բացառիկ հարուստ քաղաքակրթության և շարունակական ու կենսունակ մշակույթի:

Պետք է կազմակերպել Հայ Եկեղեցուն նվիրված մի քանի մեծ ցուցահանդեսներ, որոնք ծիսական սպասների և առարկաների միջոցով վեր հանեն և բացատրեն հայ հավատի և ոգեղինության հիմնական արժեքները: Այս բովանդակությամբ արդեն իսկ երկու ցուցահանդեսներ ծրագրումի ընթացքի մեջ են 2000 թվականի համար: Մեկը՝ Լոնդոնի Բրիտանական թանգարանի /British Museum/ մեջ՝ խորագրված «Հայ արվեստը Դ–ԺԷ դարերում», և մյուսը՝ Վենետիկի Palarro Durale թանգարանի մեջ՝ «Հայերը Այսօր և Երեկ – ճարտարապետություն և մշակույթ»: Ներկայիս կազմակերպված ցուցահանդեսները Նանտի Dobree թանգարանի և Ֆրանսիայի Ազգային Մաուզեադարանի մեջ պետք է համարել սկզբնավորությունը ցուցահանդեսների մի շարքի, որը շարունակվելու է մինչև 2001 թվականը: Անհրաժեշտ է նաև կապեր

հաստատել այնպիսի մեծ թանգարանների հետ, ինչպիսիք են Նյու Յորքի Metropoliten և Փարիզի Louvre թանգարանները:

Նաև առաջարկներ եղան կազմակերպելու թեմատիկ որոշակի ուղղվածություն ունեցող ցուցահանդեսներ, ինչպես «Ծիսական կամ արարողական անոթներ և զգեստներ, եկեղեցիների խորանների վարագույրներ ու ձեռագործներ»: Հանձնախումբը ջերմորեն հանձնարարում է, որ ցուցահանդեսները ժառայեն նկարագրելու և բացատրելու Հայ Եկեղեցու հավատը, հատկապես ներկա երիտասարդ սերնդին: Այս ցուցահանդեսները պատրաստ պետք է լինեն ներառելու մասնավորաբար Արևելյան Ուղղափառ Եկեղեցիները, ինչպես նաև իսլամական աշխարհը:

Չորրորդ խումբ՝ «Հրատարակություններ», ներկայացվեց պրոֆ. Պիտեր Քառի կողմից:

Հրատարակությունների մի ընդարձակ ծրագիր ներկայացվեց Հանձնախմբի կողմից, նկատի ունենալով և եղած առաջարկությունները: Այն ընդգրկում է ծիսական, աստվածաբանական, հայրաբանական, վկայաբանական և պատմական բնագրեր, ինչպես նաև այլ աշխատասիրություններ հայ քրիստոնեական արվեստի և ճարտարապետության վերաբերյալ: Ընդհանուր աշխատությունների թվում հատկապես հիշվեց պատրաստությունը քառահատոր Հայ Եկեղեցու պատմության, Հայ Եկեղեցու պատմությունը մեկ հատորով՝ ներկայացված պարզ և ժողովրդային շարադրանքով, ինչպես նաև հատորներ նվիրված հայ ծեսին և քրիստոնեական գրականությանը:

Հինգերորդ խումբ. «Ուխտագնացություններ և 1700-ամյակի ոգեկոչումներ»: Նյութը ներկայացրեցին պրոֆ. Վիգեն Կյուրոյանը և Գեղամ Քևոնյանը:

Ուխտագնացությունների շարքը պետք է սկսվի 1997 թվականին և իր գագաթնակետին պետք է հասնի 2001 թվականին քրիստոնյա Հայաստանի սրբական վայրերի մեջ: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել այն սրբատեղիներին, որոնք Ս. Էջմիածնի մոտ են և որոնց վրա հիմնված է Հայ Առաքելական Եկեղեցին: Նկատի պետք է առնել նաև Միջին Արևելքի և Արևմտյան աշխարհի մեջ այն վայրերն էլ, որոնք Հայ Եկեղեցու առաքելական և պատմական ժառանգության համար կարևորություն ունեն: Պետք է շեշտել ուխտագնացության՝ հոգևոր սնունդ և լույս մատակարարող նկարագիրը: Նախապատվությունը պետք է տալ երիտասարդներին, նրանց ուխտագնացությունը բացատրելով որպես բարեպաշտության արտահայտություն և այդ նպատակով տալ որոշ ցուցմունքներ ու կատարել նախապատրաստական անհրաժեշտ քայլեր:

Խորհրդակցական միջպետական այս մարմնի ձեռնարկները հարկավոր է հնարավորին չափ համադրել Հայաստանի Հանրապետության նախագահի կազմած կենտրոնական հանձնախմբի աշխատանքների հետ:

Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Ա-ը Փարիզի գիտաժողովին մասնակից բոլոր մասնագետներին առաջարկեց հետևյալները՝

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր եկեղեցիները ներառնել ծրագրի մեջ, համաձայն որի վերանորոգման ենթարկվեն եկեղեցիները:

2. Հայ և օտար մասնագետները նախաձեռնություն ստանձնեն կապի մեջ լինելու Հայաստանում և օտար պետություններում համապատասխան մարմինների հետ, որպեսզի թե՛ Հայաստանի և թե՛ իրենց իշխանության սահմանների մեջ գտնվող բոլոր հայ եկեղեցիների ու հուշարձանների պահպանման համար առնվեն համապատասխան դրական քայլեր:

Հաջորդ օրը տեղի ունեցավ Գործադիր մարմնի նիստը, որին ներկա էին Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը և նախորդ օրը Մնթիլիասից ժամանած Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա Կաթողիկոսը:

Փակելով գիտաժողովը, Վեհափառ Հայրապետը ըստ արժանվույն գնահատեց բոլոր առաջարկները և Հայ Եկեղեցու անունից շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության համար:

ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Կիրակի, հունիսի 16-ին, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր Տաճարում մատուցվեց Ս. Պատարագ, որին ներկա էին Ֆրանսիայում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Վիգեն Չիթեչյանը, Սլֆորվիլի քաղաքապետը, Հայ Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ, Հայոց Դարձի 1700-ամյակի հանդիսություններին նվիրված գիտաժողովի մասնակիցները: Ս. Պատարագը մատուցեց Կենտրոնական Եվրոպայի և Շվեդիայի նվիրակ Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը: Այնուհետև հավուր պատշաճի քարոզ խոսեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Քարոզում, որի համար բնաբան էր ընտրվել շարականագրի «Եկայք շինեսցուք սուրբ վիճակն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան Աշխարհի» տողերը, Վեհափառ Հայրապետն անկախացած հայրենիքը նկատեց հայ ժողովրդի դարավոր երազի իրականացում՝ «70 տարիների սառնամանիքեն ետք»: «Մեր նահատակներուն արյան գինը մենք ահավասիկ ձեռք կբերենք մեր անկախ պետականության ստեղծումով», նշեց Նորին Սրբությունը: Անցումնային բարդ շրջան ապրող Հայաստանի իրավիճակին և հայ

ժողովրդի ճիգերին անդրադառնալով՝ Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ նման պարագայում անհրաժեշտ է Սփյուռքի անվերապահ աջակցությունը:

Երկուշաբթի տեղի ունեցավ Գործադիր Մարմնի ժողովը, որի սկզբում ներկա գտնվեցին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ը, որը նախորդ օրը ժամանել էր Անթիլիասից:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՓԱՐԻԶԻ Ս.ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՆԱՆՏ, ԴՈԲՐԵԻ ԹԱՆԳԱՐԱՆ

Հունիսի 19-ին, հատուկ հրավերով, Գարեգին Ա Կաթողիկոսը մեկնեց Նանտ քաղաք, ուր նշանավոր «Մոնպրե» թանգարանում բացվել էր մինչև 4-րդ դարի հայ մշակույթը ընդգրկող ցուցահանդեսը: Վեհափառ Հայրապետը հրավիրված էր թանգարանի տնօրինության կողմից և նրան ընկերակցում էր Արամ Ա Կաթողիկոսը: Երկաթուղային կայարանում Վեհափառ Հայրապետին դիմավորեցին տեղի իշխանության ներկայացուցիչ Դոնաթիե դը Սեմեկոնը, Հռոմեական Կաթողիկե Եկեղեցու հոգևոր հովիվ Մարկոս արքեպիսկոպոսը, թանգարանի տնօրեն Ժակ Սանդրոն, պաշտոնատար այլ անձինք:

Շքախումբը նախ ուղևորվեց Նանտ քաղաքի արքեպիսկոպոսարան: Մարկոս արքեպիսկոպոսը ողջույնի ջերմ խոսքեր ուղղեց մեծարգո հյուրերին: Վեհափառ Հայրապետը ֆրանսերեն իր ելույթում արժևորեց Հայ Եկեղեցու մշակութային դերը և էջմիածնական ոգին: Ընդունելության արարողակարգից հետո տեղի ունեցավ հուշանվերների փոխանակություն և հյուրասիրություն:

Սպա Մայր Տաճարում կատարվեց հատուկ գոհաբանական աղոթք՝ ֆրանսերեն և հայերեն լեզուներով: Ներկա էին Ֆրանսիայի հավատացյալների հետ միասին քաղաքում ապրող 20 հայազգիներ:

Մայր Տաճարից թափորն ուղղորդվեց Նանտի նահանգապետարան: Փոխնահանգապետ պրն. Բեռնար Ֆրոդենը հատուկ խոսքով իր և նահանգապետի (որը բացակայում էր քաղաքից) անունից ողջունեց Վեհափառ Հայրապետի այցելությունը: Վեհափառ Հայրապետը իր շնորհակալությունը հայտնեց ջերմ ընդունելության համար, երախտագիտության և գնահատանքի խոսք ասաց նաև Դոբրե թանգարանում հայ քաղաքակրթությանը նվիրված ցուցահանդեսի կապակցությամբ:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ՍՐՍՄ Ս ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԸ ԵՎ ՄԱՐԿՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԸ ՆԱՆՏԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

Հանդիսակարգից հետո Վեհափառ Հայրապետը իրեն ուղեկցող շքախմբով, այցելեց թանգարան: Թանգարանի տնօրեն Ժակ Սանդրոն անձամբ մեծահարգ հյուրերին առաջնորդեց բոլոր սրահները, ներկայացրեց և մանրամասն բացատրություններ տվեց ցուցադրվող իրերի մասին: Պրն. Սանդրոն նշեց, որ ցուցահանդեսի բացումը մեծ իրադարձություն էր ֆրանսիացի ժողովրդի համար, և արդեն 12 հազարից ավելի այցելուներ հետաքրքրությամբ ծանոթացել են Հայաստանի 4000-ամյա քաղաքակրթությունը ներկայացնող ցուցադրանքին:

Այցելության ավարտին Վեհափառ Հայրապետը նշեց. «Այս ցուցահանդեսը խոսք է անցյալի մասին, բայց Հայաստանը չի պատկանում միայն անցյալին: Այսօր մեր հանրապետությունը ապրում և կարգանում է ապատ, անկախ պայմաններում և իր պատմությունն ու մշակույթը հարստացնում նոր իրագործումներով»:

Կեսօրին թանգարանի տնօրինության կողմից ի պատիվ Վեհափառ Հայրապետի տրվեց ճաշկերույթ, որի ընթացքում Վեհափառ

Հայրապետը մեկ անգամ ևս իր բարձր գնահատանքը հայտնեց հայանպաստ այս մեծ և կարևոր ձեռնարկումի համար:

Վեհափառ Հայրապետի այցելությունը լայն արձագանք գտավ, լուսաբանվելով Նանտ նահանգի և քաղաքի մամուլի և ձայնասփյուռի միջոցով: Ընդարձակ հոդվածներ տպագրվեցին Press-Ocean *և* Oues-France *թերթերում:*

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ

Հունիսի 21-ին Վեհափառ Հայրապետը, իրեն ուղեկցող պատվիրակության հետ, Փարիզ-Երևան ինքնաթիռով վերադարձավ Մայր Աթոռ:

«Զվարթնոց» օդանավակայանում Նորին Սրբությանը դիմավորեցին Մայր Աթոռի Դիվանապետ Ներսես արքեպս. Պոլսապալյանը, Կրոնի գործոց խորհրդի նախագահ Լապար Սուքյանը, բարձրաստիճան հոգևոր հայրեր և պաշտոնյաներ:

Մայր Տաճարում մատուցված գոհաբանական աղոթքից և բարիգալստյան արարողությունից հետո Նորին Սրբություն Գարեգին Ա Կաթողիկոսը կարճ խոսքով ներկայացրեց այցելության մանրամասները և այն գնահատեց որպես կարևոր իրադարձություն Հայ Եկեղեցու պատմության մեջ և մեր ժողովրդի կյանքում:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ